

Կրոտոնի դպրոցին եւ իր անունով կոչուած փիլիսոփայական շարժման, որուն հետեւորդները կը կոչուին *Պիլթագորականներ*: Այս շարժումը ունէր իր գաղտնի ու աղանդական միութիւնը եւ ընկերասիրական ու հաւաքական ապրելակերպը:

Պիլթագորասի համաձայն հոգին, որ բանտուած է մարմնին մէջ՝ անմահ է. եւ մարդու կեանքի բարձրագոյն նպատակը պէտք է ըլլայ մաքրումը հոգիին, որ պիտի ազատագրուի մահէն ետք՝ այլ մարմնով մը վերստին ծնելու համար (հոգիի *վերամարմնաւորումը*, Reincarnation): Իսկ հոգիի մաքրումը կը կատարուի առաքինի եւ ժուժկալ կեանք ապրելով, բուսակերութեամբ եւ յատուկ կրօնական արարողութիւններու հետեւելով: Իսկ հոգիի վերամարմնաւորումը տեղի կ'ունենայ, երբ մարդ իր կեանքի ընթացքին չէ կրցած հոգին բոլորովին մաքրել. որովհետեւ վերջին նպատակը՝ հոգիի շրջագայութեան կասեցումն է: (Պիլթագորաս եւ բազմաթիւ Պիլթակորականներ բուսակեր եղած են:)

Պիլթագորաս կը հաւատար մոլորակներէն յառաջացած ու ներդաշնակ *ոլորտային երաժշտութեան* (Music of the Spheres) մը եւ զարգացուցած էր երաժշտաբուժութիւն մը, որ նաեւ մաս կը կազմէր պիլթակորականներու կրօնական արարողութիւններուն եւ ունկնդիրներուն ոլորտային կամ երկնային ներդաշնակութիւն ու հանգստութիւն կը պարգեւէր:

Պիլթագորականները առաջիններն էին, որոնց համաձայն երկիրը՝ գունդի ձեւ ունի եւ մոլորակներու շարուածքը՝ ներդաշնակութիւն մը կը ներկայացնէ: Պիլթագորաս նաեւ առաջինն էր, որ արտայայտուած է *ներհայեցողութիւն* (Intuition) հասկացութեան մասին⁽⁹⁾:

Պիլթակորասի համար *ընկերն ու ընկերութիւնը*⁽¹⁰⁾ կարելոր դեր կը խաղան: Պիլթակորականներու համաձայն, քանի որ տիեզերքը (իր բաղկացուցիչ մասերով), ներդաշնակ համագործակցութեամբ համախմբուած միասնութիւն մը կը նկատուէր, ուրեմն բոլոր կենդանի էակներուն (ներառեալ աստուածները) միջեւ բնականաբար սերտ ընկերութիւն մը պէտք է յառաջանար, որ մասնաւորաբար կը շեշտուէր Պիլթակորականներու միջեւ:

Պիլթագորական ուսողութիւնը (Mathematics, մաթեմատիկա), ընդհանրապէս, կը յատկանշուի իր զուտ տեսական նկարագրով եւ մասնաւորաբար իր բարոյական նկարագրով: Պիլթագորական թիւերու ուսմունքը տեսակ մը թուանշաններու խորհրդապաշտութիւն (Mysticism) մըն էր եւ Պիլթակորասի խօսքերով՝ «ամէն բան թիւ էր»: Այլ խօսքով, պիլթագորական թուաբանութիւնը եւ երկրաչափութիւնը գործնական ծառայութիւններ չէին մատուցաներ եւ թուանշանները ունէին բարոյական որոշ արժէքներ: Պիլթագորասի համաձայն, կարգ մը թուանշաններ կը նշանակեն՝ արդարութիւն, երկպառակութիւն կամ ներդաշնակութիւն ... առանց մեզի համար հասկնալի պատճառներու կամ համոզիչ տուեալներու:

(9) **Ներհայեցողութիւն** (Intuition) հասկացութեան մասին տե՛ս Մաս – 9, Էջ 508:

(10) **Ընկեր եւ ընկերութիւն** հասկացութիւններուն մասին տե՛ս Մաս – 9, Էջ 461: